

«ՅՈՒՐԵԼԻՆԱԿԱՆ-ԱԽՈՅԵԱՆԱԿԱՆ»

Պրն. Ծ. Նարդունի «Չուարթնոց»<sup>1</sup> ամսօրեայ գրաթերթին Ա. Թուրն մէջ Լեզուաբանական վերնագրին տակ յօդուած մը հրատարակած է «Յորեղան» բառին շուրջ: Որքան որ անկեղծ է իր սրբագրութեան փորձին մէջ և գովելի իր նախանձախնդրութիւնը մեր մեծասքանչ լեզուին նկատմամբ, սակայն թող ներէ ըսելու թէ սխալ և անհիմն է իր պաշտպանած տեսակէտը:

Հարցը երբայական յորեղան բառին յորեղանական ածանցաւոր ձեւի մասին է, որուն վրայ կ'աւելնայ յետոյ նաեւ ախոյեանականը:

Պրն. Ծ. Նարդունի կը դատապարտէ այդ երկու ձեւերն ալ՝ իրբեւ հակառակ հայ լեզուի հիմնական օրէնքներուն:

Լսենք իր ապացոյցներն և եզրակացութիւնը.

«Հետաքրքրուող անգամ չկայ, կ'ըսէ ան, դարձեալ, եթէ յորեղան բառը՝ երբ ածանցուի՝ շիտակն ինչպէս կը գրուի: Այսպէս շատեր կը գրեն. — Յորեղանական: Արիւնս գլուխս կը ցատկէ: Երբ է տեսնուեր, Հայոց մեծասքանչ լեզուին մէջ, որ եւ երկրարբառը ի տառին փոխակերպուի: Այս ապուրը կ'ուտեն հիմայ մեր բոլոր թերթերը, որոնք ամիսը մէկ անգամ յորեղանի մը լուրը կու տան: Եւս վերջաւորութեամբ ուրիշ բառ մըն ալ, ախոյեան, կ'ածանցեն անփոփոխ ու կը գրեն ախոյեանական:

Զըլալիբ բան է:

Պիտի կրնանք հասկցնել մեր զրոյց — բրոցներուն թէ, հայերէն լեզուի մէջ, եւս վերջաւորութեամբ բառերը, ածանցումի կամ բարդութեան առանձն, կը կորսնցնեն իրենց վերջին ա տառը և վերջացաւ: Այսպէս — Մատեան բարդումով կ'ըլլայ մատեանախօս, մատեանադարան: Առէք մատեան բառը, բարդումով կ'ըլլայ մատեանախօս: Տեսնուի որ զրուած ըլլայ մատեանախօս կամ մատեանախօս զուէր և զուէր մատեանախօս: Ուրեք հայ լեզուն, — ո՞վ հակասութիւն, — աստուածային ներդաշնակութիւն մը ունի և հրաշալի կանոնադրութիւն մը:

տեանախօս, մատեանադարան: Առէք մատեան բառը, բարդումով կ'ըլլայ մատեանախօս: Տեսնուի որ զրուած ըլլայ մատեանախօս կամ մատեանախօս: Վերջապէս մատեանախօս ցելով կ'ունենանք մատեանիկ, մատեանիկ, մատեանիկ: Ուրեքն յորեղանն ալ կ'ըլլայ յորեղանական, ինչպէս ախոյեանը՝ ախոյեանական:

Երբ յորեղան մը կը տօնէք, սորվեցէք վարուիլ յորեղան բառին հետ այնպէս ինչպէս կը հրահանգէ աստուածաշունչ հայերէն լեզուն:

Ճիշտ է որ իրբեւ ժողովուրդը պաշարուող էր, անկարգ և անկանոն, բայց հայ լեզուն, — ո՞վ հակասութիւն, — աստուածային ներդաշնակութիւն մը ունի և հրաշալի կանոնադրութիւն մը:

Աշխատեցէք գէթ մեր լեզուէն հետու պահել սա մեր աւանդական անկարգութիւնը»:

Ահա ինչ որ կ'ըսէ Պրն. Ծ. Նարդունի:

Սորված ըլլալով վարուիլ յորեղան բառին հետ՝ այնպէս ինչպէս կը հրահանգէ աստուածաշունչ հայերէն լեզուն — ո՞վ հակասութիւն — կը ստիպուինք ըսել թէ Պ. Ծ. Նարդունի զոհն է պատրանքի մը՝ որ առաջ կու գայ յորեղան և իր օրինակ գործածած մատեան, մատեան եւս, բառերու առեւտրով նմանութենէն:

Անշուշտ յայտնի է և տարակոյսէ դուրս թէ մատեան — մատեան և բոլոր եւս դասակարգին սեռական հոլովը կ'ըլլայ մատեանի — մատեանի եւս. և որովհետեւ ածանցում, բարդութիւն սեռականի արմատէն կը շինենք, իրաւունք ունի Պրն. Ծ. Նարդունի ըսելու՝ մատեանախօս... մատեանախօս:

1. Ա. տարի. Թ. 1, 15 Սեպտ. 1937, էջ 4, Խմբ. Հ. Բալուան. 1, Rue de l'Acqueduc, 1, Paris (Xe).

և, ստոյգ է որ տեսնուած չէ երբեք մատեանախօս կամ մատեանախօս:

Մինչեւ հոս լաւ: Սակայն յորեղան բառի մասին հանուած հետեւանքն է որ սխալ է, որովհետեւ այդ բառին սեռականը սովորականէն տարբեր ձեւով աւանդուած է մեզի մեր աստուածաշունչ հայերէն լեզուէն:

Կը յիշեմ Պրն. Սիրունիի արդար մէկ մեղադրանքը՝ ուղղուած մեր զրագէտներուն, որոնք, կ'ըսէր նա, շատ անգամ լեզուական մեղքեր մը կը գործեն պարզապէս անոր համար որ յոգնութիւնը չեն ուզեր քաշել բառգիրք նայելու այս կամ այն բառը:

Այս անգամ Պրն. Ծ. Նարդունի է որ առարկայ կը դառնայ այդ մեղադրանքին: Արդարեւ եթէ նա քննած ըլլար բառգիրք մը, պիտի տեսնէր որ յորեղան բառին սեռականը յորեղանի է և ոչ յորեղանի. և հետեւաբար ածանցուելով պիտի ըլլար ուղիղ յորեղանական. և հարկ պիտի չըլլար ոչ արիւնը գլուխը զարնելու և ոչ այդ սողերը զրելու ձանձրոյթը կրելու:

Իրբեւ ապացոյց կը բաւէ Աստուածաշունչի աստուածաշունչ լեզուէն մէկ օրինակ իսկ — Ս. Սահակի և Մեսրոպի լեզու — ինչպէս Յեսուայ զրբի Զ. Յ. «Բայց զու — ինչպէս Յեսուայ զրբի մարտիկս շուրջանակի յորեղանակ»:

Յորեղանի սեռականի այս բացատրիկ ձեւը՝ Աստուածաշունչին մէջ մէկ օրինակ՝ զժրատութիւնն ունեցած է ոչ միայն շիշուելու մեր Հայկազեան Բառարանէն, այլ նաեւ մոռցուած է Սաղիմեան Համարարանէն:

Բայց Աստուածաշունչէն գատ անդին ուրիշ զրբերու մէջ ալ կը գտնենք յորեղանը իր սեռական հարազատ ձեւով. տեսնենք Հայկ. Բառարանը. «Յորեղան կամ Յովրեղան, թիւրք. սկիզբն կամ Յովրեղան, թիւրք. սկիզբն Ծիր. քառասուն և մի ամի յորեղանիկ. Ծիր. քառասուն և մի ամի յորեղանիկ»:

1. Զարմացանք թէ ինչո՞ւ Հայկազեան բառգիրքը Աստուածաշունչի երկու օրինակներուն մէջ ալ կը շեղի

ի յաւարտումն կատարման իննեբեակ յորեղանիկ. Նար. Ղ. և յիշ:

Աճառեան ալ, օր. Յորեղանի զիմայ կը գործածէ իրբեւ հոմանիշ՝ յորեղանաւոր. (հմմտ. Արմատ. Բորն. հտ. Գ. էջ 1304): Ըսենք նաեւ թէ կը գործածէ մինչեւ Յորեղանական ածանցեալ ձեւը բայց մտքէն չէ անցուցած բնաւ Յորեղանականը:

Կ'եզրակացնենք ուրեմն, թէ՛ յորեղան օտար բառը իր յատուկ սեռականն ունի մեր ոսկեղէն և ոչ ոսկեղէն լեզուներուն մէջ. այսինքն յորեղանի, ուսկից՝ յորեղանական եւս. հետեւաբար պէտք է ըսենք ողբ. Հ. Արսէնի յանկերգով.

մի՛ գրէք յորեղանի — յորեղանական, այլ զրեցէք յորեղանի — յորեղանական:

Անցնինք ԱԽՈՅԵԱՆ—ԻՆ

Այս բառը երկու ձեւով աւանդած են մեզի մեր Նախնիք, այսինքն ախոյեան և ախոյան. և եթէ լաւ ուշ դնենք՝ ոսկեղէն շրջանի գործերու և հեղինակութիւններու մեծ մասը կը նախընտրեն ախոյան ձեւը՝ որուն նման անծանցով բառ կայ միայն կայանք. իսկ յեան վերջով բառ ախոյեանն ինքը միայն:

Բ. ԹԱԳ. Ա. 6. Կառք և ախոյանք հեծելոց ՅՈՎԵԼ Բ. 7. Իրբեւ զախոյանս յարձակեսցին

- ԵԶՆԻԿ Ա. Մարթիցեն յաղթել ախոյանից
» » Մրցել ընդ ախոյանսն
» » Ի վերոյ լիցին ախոյանիկ
» » Ճգնութեան ընդ ախոյանիկ
» » Վատանուն յախոյանիկ անտի
ԵՓՐ. ՄՆՆ. Ի վերայ ախոյանիկ իւրոյ
» » Յախոյանիկ անտի իւրմէ:

Նշանակելի է անշուշտ թէ ինչպէս, օր. Եզնիկ, մի միայն ախոյան ձեւը կը գործածէ բոլոր օրինակներուն մէջ:

Աստուածաշունչի ալ հնագոյն և ընտրելու լագոյն ձեռագիրները միայն ախոյան՝ ունին, ինչպէս տեսանք օրինակներուն մէջ

հնագոյն զրագէտներէն՝ որոնք մէջ յատկապէս քննեցինք և տեսանք մի միայն ախոյան ձեւը:

և ինչպէս նշանակած են Չօհրապեան և Բագրատունեան տպագրութիւնները:

Ասով, սակայն, չենք ուրանար թէ քանի մը ընտիր հեղինակներու քով ալ կը գտնուի ախոյեան ձեւը (Բրս. Ագաթ. Բուզ. հմմտ. Հյկզ. բորն.) և մասնաւորապէս յետին դարերու մէջ աւելի սովորական դարձած, բայց դարձեալ կը պնդենք ախոյան-ի նախընտրութեան մասին, մանաւանդ որ այդ ձեւն է որ կը տիրապետէ սեռականի և հետեւաբար անհոգումի մէջ:

Իբրեւ ապացոյց մեր ըսածին՝ նախ կարելի է վերստին համեմատել Եզրիկի «Եղծ աղանդոց»-էն վերեւ յիշուած օրինակները, որոնց մեծ մասը սեռական է բարեբախտաբար. ախոյանի: Նոյն ըսենք Ս. Եփրեմեան բերուած երկու օրինակներուն համար (հմմտ. վերեւ): Կը բաւէ հոս դնել Հայկազեան Բառարանի յիշածներէն քանի մը օրինակ եւս.

- ՊԻՏ. Նահատակեցելոցն ախոյանից
- » Նախամարտիկ և առաջին ախոյանից
- ՍԱԳ. Քաջացան ընդդէմ չար ախոյանից
- ԼՄԲ. ՍՂ. Ի վերայ անմարմին ախոյանից
- ՈՍԿ. ՅՈՂ. Իբրեւ յախոյանի ուրուք:

Եւ հարկ է նշանակել թէ օրինակներու այս բազմութեան մէջ, վերեւն և հոս, հազիւ մէկ անգամ կը գտնենք ախոյան-ախոյանի սեռականով (հմմտ. Բուզ. Ե 4.):

Եւ ինչ որ աւելի ցայտուն է՝ ամանցումները միշտ ախոյան-ախոյանի ձեւէն կազմուած են. ինչպէս ԱԽՈՅԱՆԱԲԱՐ, ԱԽՈՅԱՆԱԿԱՆ, ԱԽՈՅԱՆԱՐՁԱԿ:

- Տեանենք օրինակներ.
- ՎԲԲ. ՀՅ. Բ. Ախոյանարար և ուրախութեամբ կրեաց.
- ՈՍԿ. ԵՍ. Չ. Յախոյանական տեղոյն լոկ զընացուք.

1. Կարելի է թելադրել համեմատելու Նախնաց, օր. շեան բառն կազմած ամանցումները առանց սղման. օր. Ելանեն շեանան (Սղմ.). և այն՝ ընտիր Թարգմանութեանց մէջ. օր. Չտեսանիցեն զշեանական (Ոսկ. Եփեմ. ժ. Գ.). - Միանունն շեանական (Բուզ. Ե. Իէ), «շեանական սրանչեւի (Բուզ. Չ. Գ.) - «ի շեանակողմ

- ԱՄԲ. ՊՏՄ. Ախոյանարձակքն զմիմեամբ շութափէին.
- » » Ախոյանայարձակ սլացմամբ
- » » Յախոյանայարձակ պատերազմունս:

Եւ ինչ որ աւելին է և ուշադրութեան արժանի՝ մինչեւ անգամ ախոյան ձեւէն ամանցումներ կան առանց տրուի, ինչպէս կը նշանակէ Հյկզ. բորն. վերեւ յիշուած օրինակներուն մէջ իստն.

- ՎԲԲ. ՀՅ. Բ. Ախոյանարար (կամ ախոյանարար) և ուրախութեամբ կրեաց:
- ԱՄԲ. ՊՏՄ. Չօրքն ախոյանայարձակ գպատերազմս վառէին.

Ախոյան-ախոյանի ձեւէն մէկ ամանցաւոր միայն կը յիշէ Հյկզ. բորն. ան ալ ոչ հին.

ՈՒՈՊ. Ախոյանանայր ընդդէմ թշնամոյն:

Կ'եզրակացնենք թէ ընտրելագոյն է գործածել ախոյան ձեւը, և անոր սեռականը՝ ախոյանի, և հետեւաբար ախոյանական, ախոյանարար, ախոյանօրեւ ամանցումները, փոխանակ ախոյան-ախոյանի - ախոյանական - ախոյանարար են. ձեւերուն, որոնք եթէ բերականօրէն ուղիղ են, սակայն նուազ բարեհնչուն և ախորժելի, և անշուշտ ասոր համար ալ զրեթէ բուրովին անտեսուած:

Աւելցնենք հուսկ, որ, եթէ Նախնիք իրենց ներելի համարած են գործածել մինչեւ անգամ ախոյանարար, ախոյանայարձակ չսղուած ամանցումները, չափազանց է Պրն. Ե. Նարզունիի պահանջը որ կ'ուզէ պարտադրել ախոյանականը<sup>1</sup>

\* \* \*

Այս առիթով մեր յարգելի ընթերցող-

տեղիս» (Փարպ.) - յետոյ՝ շեանակեաց, շեանակողմն, շեանանակգետ, շեանամէշ, շեանամէշ, շեանային, շեանացայտ, (հմմտ. Հյկզ. Բորն.), փոխանակ ԸԼԼԱԼԸ (ինչպէս և կ'ըլլան) Լեոնանամ, Լեոնական, Լեոնակեաց, Լեոնակողմն, Լեոնային են բերականական պարզ և սովորական ձեւով:

ներուն ուշադրութեան կը յանձնենք ուղղելու աշխարհարարի մէջ ատենէ մը ի վեր սպրդած զեղծումներու կարգէն

«ՅԵՏ ԱՅՍՈՒ»

Երկար փաստերու հարկ չկայ՝ ցուցնելու համար թէ հիմնովին սխալ է այս ձեւը: Նախ ցուցակակը զբարարէն աշխարհարարի վերածելով՝ իսկոյն մերկացուցած կ'ըլլանք պատրանքը: Արդարեւ, ոչ ոք պիտի տատամսի դատապարտելու յետ աւսով, յետ պատերազմով, յետ խաղաղութեանը, յետ համոզելով ձեւերը, որոնք յայտնապէս սխալ են. ուղիղ ձեւով պիտի ըսենք՝ յետ ասոր (զբարար՝ յետ տրս կամ յետ այտրիկ), յետ պատերազմի, յետ խաղաղութեան, յետ համոզելու են, ուսկից յայտնի է թէ յետ իրմէ վերջ սեռական հոլով կը պահանջէ և ոչ գործիական:

Ունինք այստեղ կազմուած ձեւեր մակ-բայի իմաստով, որոնք, ստոյգ է, գործիական կ'ուզեն, ինչպէս՝ այստե հանդերձ, այնտե հանդերձ, ընտանիքով հանդերձ, հանդերձ իր բոլոր ձիրքերով, են: Դարձեալ ունինք այստե ամենայնիւ, այնտե ամենայնիւ զբարարեան ձեւերը՝ համազօր այստե կամ այնտե հանդերձ-ի, որոնք սակայն ոչ մէկ աղերս ունին և ոչ մէկ կերպով կ'արգարացնեն յետ այստե սխալ ձեւը:

«Յետ այստե» հակաբերական և աններելի ձեւին տեղ և անոր համազօր ունինք այստեհետե-այնտեհետե մակբայները (հմմտ. ֆրնս. dorénavant = d'or-en-avant, իտ. d'ora-in-avanti կամ d'ora inanzi = ասկէ վերջ, ասկէ անդին, ասկէ դէպ ի յառաջ) որոնք շատ լաւ կը բացատրեն այն իմաստը որ կ'ուզուի յետ այստե-ով:

Այստեհետե պէտք է դադրէք ծիւղէ. Այստեհետե նոր օրէնքը կը զօրէ. Այստեհետե ներելի չէ «յետ այստե» գործածել.

և կամ  
Այնտեհետե ընթուցի իր սխալը, են:  
Այս ընտիր ձեւերէն զատ անդին կայ

և կը մնայ տարրականը՝ ասկէ, ատկէ, անկէ վերջ, կամ ասկից, ատկից, անկից վերջ (հմմտ. գր. աստի, այտի, անտի):

Հետեւաբար կրնանք եզրակացնել. Մի՛ զրէք յետ այստե, յետ այնտե. Այլ զրեցէք այստեհետե, այնտեհետե. կամ ասկի ատկի, անկի վերջ (ասկից, ատկից, անկից վերջ):

\* \* \*

Նորամուտ խորթութիւն մ'ալ՝ անգլերէն, գաղղերէն (նաեւ գաղղերէն) ձեւերն են, փոխանակ զրելու սովորական և կանոնաւոր՝ անգլիերէն, գաղղիերէն ձեւերը:

Այս սխալ ձեւն հնարողները դիւրաւ պիտի ըմբռնեն իրենց գործած անտեղութիւնը՝ երբ նոյն ցեղանուններուն տեղական կամ որականական ամանցումներուն մէջէն ալ վտարեն ի. օր. անգլացի, գաղղացի կամ անգլական, գաղղական:

Այս պարագային մէջ առաջ եկած յայտնագոյն անտանելի խժածայն տեղութիւնը կը բացատրէ յատուկ պահանջը ի՛նչ այդ ազգանուններուն ամանցումին մէջ՝ թէ՛ զոյգ բաղաձայններու դիրքէն և թէ՛ ընդհանուր քաղցրածայնութեան տեսակէտով:

Այլապէս, օր. նոյն անուններու տարբեր ձեւերը՝ բրիտաներէն, բրիտանացի, ֆրանսերէն - ֆրանսացի՝ նման պահանջ մը չունին՝ չունենալով բաղաձայններու յիշեալ զուգադրութիւնն և այն դիրքին մէջ ստեղծուած խժածայնութիւնը:

Աւելորդ է խօսիլ միւս ցեղանուններու մասին, որոնք առանց դժուարութեան սովորական ձեւով կ'ամանցուին. իտալերէն - ացի - լական, գերմաներէն - ացի - նական, արաբերէն - ացի - ահան են. թերեւս միայն՝ Սպանիան է որ դժուարութիւն կը ստեղծէ, և այդ պարագային ալ քաղցրածայնութեան համար հարկ է ըսել սպանիացի և ոչ սպանացի: Հետեւաբար պիտի ըսենք թէ

Մի՛ զրէք անգլերէն, գաղղերէն  
Այլ զրեցէք անգլիերէն, գաղղիերէն:  
(սպաներէն - սպանիերէն):

\*  
\*\*

Հոս կը զետեղենք նաեւ՝ հինէն ու նորէն՝ մեր մամուլէն քաղուած սխալներ, որոնք դիւրաւ կրնան ուղղուիլ:

Մի՛ գրէք ոսկրոտիք<sup>1</sup> — ոսկրոտեաց, այլ պարզապէս ոսկրոտի, քանի որ այդ և նոյն տի ածանցով քանի մը բառեր, օր. մանկտի, ծակտի, փորոտի եւն, արգէն յոգնակի են և չեն կրնար կրկին յոգնակի դառնալ: Կը բաւէ ուրեմն զանոնք եզակի ձեւով հոլովել, և իմաստը յոգնակի է միշտ: Ասոր նման են անշուշտ աւագակի, ընտրակի, եւն, որոնք նոյնպէս յոգնակի ըլլալով իրենց ակի յատուկ ածանցով՝ չեն կըրնար այլեւս ք կամ ներ առնել և կրկին յոգնակի դառնալ:

\*  
\*\*

Եթէ արդի անուններու տառադարձութիւնը շատ անգամ անկարելի է, և երբեմն նոյն իսկ անտեղի, սակայն պարտական ենք յարգել մեր Նախնեաց նուիրագործած կամ վերջապէս Հայ ժողովրդեան մէջ ընտանեցած ձեւերը. հետեւաբար ունենալով՝ Հերակիս — Հերակիսան, Սասիով, Պեղարկու, Ովիդիոս եւն տառադարձուած կանոնաւոր ձեւերը, ներելի չեն հետեւեալ խորթ և տգիտական կազմերը, Հերքիւրիս — Հերքիւրիսան, Սափօ, Պեղարկու, Օվիտ եւն. որոնք սպրդած էին Հայ մամուլին մէջ:

Մի՛ գրէք ոչլացում խորթ ձեւը որ գոյութիւն չունի հայերէնի մէջ, այլ գրեցէք յայտարար ընտիր բառը:

Մի՛ գրէք փառայեղ, այլ գրեցէք փառակեղ<sup>2</sup>:

Մի՛ գրէք բարոտք, այլ գրեցէք բարոտր (հմմտ. բարի — բարւոյ, եւն.):

Մի՛ գրէք մտածմունքներ, այլ գրեցէք մտածումներ կամ մտածոտրիւններ:

Մի՛ գրէք զբարոտի<sup>3</sup>, բրջոտի, աղատոտի, այլ գրեցէք զբարոտի, բրջի, աղատի:

Մի՛ գրէք ձմեռել, այլ գրեցէք ձմեռել (հմմ. գր. ձմեռել — ձմեռակ):

Մի՛ գրէք կրցի, ընդունցի, այլ գրեցէք կրցայ, ընդունցայ (հմմտ. խորնամ — խորցայ, գիրնամ — գիրցայ, ինչպէս մեկնիմ — մեկնեցայ, խօսիմ — խօսեցայ, և ոչ թէ խորցի, գիրցի և կամ մեկնեցի, խօսեցի եւն.):

Մի՛ գրէք ժամուայ — օրուայ — շաբաթուայ — ամսուայ — տարուայ, ասօրուայ, վաղուայ եւն, այլ գրեցէք ժամուան, օրուան, շաբաթուան, ամսուան, տարուան, սյաօրուան, վաղուան եւն:

Մի՛ գրէք զարբում<sup>4</sup> (զոյական), այլ զարբում — զարբօք, առանց և — և՛ բայեւրը կ'իմացուին, օր. կ'երդնում, կը զարթնում եւն: (Ն՛է անկումը տես փախուստ, թաքուստ եւն ձեւերուն մէջ ալ. որոնք կը ծագին փախուստ, բարբում եւն. բայերէն):

Մի՛ գրէք քարիւ, այլ գրեցէք սակաւարիւ:

Մի՛ գրէք ձեկալոք, այլ գրեցէք ձեկալոքի: Ռամկօրէն բառերը չեն կրնար լեզուին մէջ մտնել ածանցուելու, բարդուելու. ինչէս կարելի է պղտիկ ռամկօրէնով կազմել պղտիկոյ — պղտիկալիտ, այլ փոքրոգի, փոքրալիտ, եւն:

Հ. ԵՂԱՔ ՓԵՏԿԵԱՅ

1, 2, 3, 4, — հետ Հ. Ա. Ղազիկեանի «Մի՛ գրէք, այլ գրեցէք», էջ 107, 93 268, և 137.

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ

ՄԱՅՐԻԿԻՍ

29 ՕԳՈՍՏՈՍ 1905

Հատուած մը ԱՏԱ ՆԵԿՐԵՆ

Ո՛վ կիներ պարտուած գէմերով,  
Դուք որ հուսկ կը ժպտիք յանդիման  
Դըռներուն ձերին տան, ինչ փոյթ թէ  
Դաշինքները չեղան շահաւոր:

Ո՛չ ոսկին համօրէն այս երկրին,  
Ո՛չ բոլոր երկիրներն աշխարհիս  
Չեն կրնար խոր անդունդը լեցնել  
Մահուան՝ զոր պատերազմն է բացեր:

Այսպէս, ձեր այրերուն՝ պըսակուած  
Ջինջ պայծառ փառքերով՝ սխրալի  
Գործերու մեծագոյնն է ահա  
Պանծալի յաղթանակ պարտեալի:  
ՎԻԿՏՈՐԻԱ ԱՂԱՅՈՒԹ ԲՈՒՐՆԻԻ  
Թրգմ. Հ. Ե. Փ.

... Սպիտակ մազերուդ մէջը խիտ  
Մարմարեայ ճակատդ է անկնճիտ,  
Տարիքիդ փախուստին տակ անսանձ  
Երբեմնի պէս չքնաղ:

Քու խաղաղ երեսիդ վրան կայ  
Անվկանդ վեհութիւնն արձանի.  
Հոգերու, վախի մէջն իսկ տեսայ  
Քու ժպիտըդ պայծառ:

Նոյնպէս քեզ տեսայ ես, ու նոյնպէս  
Պիտ՝ տեսեմ վայրէջքին մէջ կեանքին:  
Անվկանդ ես դուն: Դու կեանքն իսկ ես  
Պարզունակ և անմահ...  
Թրգմ. Հ. Ե. Փ.

\* \* \*

Հարըստութիւնն այս օրուան, մընաց քեզմէ երազի  
Շուք մը տրտում որով ես այնքան հարուստ եմ նորէն.  
Ի՛նչ փոյթ որ սոսկ հեքեաթ մ'էր աշխարհի մէջ լուսեղէն,  
Ալբիւրներէդ ալ ցամքած նոր մարգարիտ կը հոսի:

Այն ժպիտէն ուր հողուոյս կը ծաթէր աստղ սը լոյսի,  
Կը հիւսեմ դեռ խոստումի դիւթանը մը վառ, ածիւնէն  
Իսկ ձեռքերս իմ կը տաքնան զերդ արեւով, քաղցրօրէն,  
Երբոր աշնան կրակը ջինջ ոսկետարափ կը հոսի:

Դրժըւեցան բոցավառ ինչ երգումներ. կ'իջնէ մութ  
Գիշերն ահա, նետահար յիշատակովը երգերուդ.  
Անգութ ձեռքեր՝ լուսաբաց դուռներն հողուոյս կը փակեն:

Ու որբ արեւ մը տփոյն կը խաւարի ամէն օր,  
Երբոր կ'երթամ անուրջի սահմանակից այն ճամբէն  
Ուր կորսուած ամէն յոյս ցաւի աղբիւր մ'է պղտոր...:

ԱՐՄԵՆ ԵՐԿՈՅ